# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.1

## ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **22 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 22-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ անվադողերի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Ն. Բաղդասարյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ՝ նյութական գծով: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և տրամադրված պարզաբանման մասին:
2. Ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գեներացված փոփոխված հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով Ընթացակարգի շրջանակում ստացված հարցման բովանդակության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես, տեղեկացվեց, որ 2026թ. հունիսի 21-ին ժամը 19:43:12-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝ «եթե ձեր նշած բրենդներից մեկի համապատասխան մոդելի LOAD indexը 152/148 է, ձեզ համար ընդունելի է այդ ապրանքը՞: Շնորհակալություն»:

2026թ. հունիսի 22-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի մասնակից, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 22-րդ ենթակետի «հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:»:

2. Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 1-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը.

2026թ. հունիսի 22-ին Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը:

2. Հաստատել Ընթացակարգի հրավերում փոփոխության կատարման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 2-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 22-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի փոփոխված հրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ, ք. Երևան, Ծևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան ______________

Ն. Բաղդասարյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ______________